ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«10» մայիսի 2019թ. N 121-Ա

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար բնապահպանական նորմեր և կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«10» մայիսի 2019թ.

ք. Երևան

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարի

2019 թ. մայիսի 10-ի N 121-Ա հրամանի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար բնապահպանական նորմեր և կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերի

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, ընդունվել է 02.05.2001, ՀՕ-185, ՀՀՊՏ 2001.06.15/17(149),
2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, ընդունվել է 04.10.2016, ՀՕ-165-Ն, ՀՀՊՏ 2016.11.04/79(1259),
3. Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրք, ընդունվել է 24.10.2005, ՀՕ-211-Ն,ՀՀՊՏ 2005.12.07/75(447),
4. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք, ընդունվել է 28.11.2011, ՀՕ-280-Ն,ՀՀՊՏ 2011.12.21/69(872),
5. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք, ընդունվել է 04.06.2002, ՀՕ-373-Ն, ՀՀՊՏ 2002.07.10/24(199),
6. <<Թափոնների մասին>> 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-159-Ն օրենք, ՀՀՊՏ 2004.12.28/72(371),
7. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենք, ՀՀՊՏ 2014.07.30/41(1054),
8. <<Լիցենզավորման մասին>> 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենք,ՀՀՊՏ 2001.08.08/26(158),
9. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> 1994 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-121 օրենք, ՀՀԳԽՏ 1994/21,
10. <<Բուսական աշխարհի մասին>> 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-22 օրենք, ՀՀՊՏ 1999.12.27/31(97),
11. <<Կենդանական աշխարհի մասին>> 2000 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-52 օրենք, ՀՀՊՏ 2000.05.12/9(107),
12. <<Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին>> 2005 թվականի մայիսի 3-ի ՀՕ-88-Ն օրենք, ՀՀՊՏ 2005.06.08/35(407),
13. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենք, ՀՀՊՏ 2006.12.25/66(521),

14. <<Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին>> 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-218-Ն օրենք, ՀՀՊՏ 2006.12.25/66(521),
15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի <<Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին>> №47-Ն որոշում, ՀՀՊՏ 2006.02.15/8(463),
16. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի <<Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին>> №2291-Ն որոշում, ՀՀՊՏ 2006.02.01/6(461),
17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> №121-Ն որոշում, ՀՀՊՏ 2003.03.06/13(248),
18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի <<Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին>> №500-Ն որոշում, ՀՀՊՏ 2006.05.10/26(481),
19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի <<Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին>> № 1180-Ն որոշում,ՀՀՊՏ 2006.09.06/47(502),
20. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի <<Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին>> № 1343-Ն որոշում,ՀՀՊՏ 2006.10.18/54(509),
21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի <<Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի № 192 և 2008 թվականի օգոստոսի 21 № 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1673-Ն որոշում,ՀՀՊՏ 2013.01.16/3(943),
22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի <<Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին>> №160-Ն որոշում,ՀՀՊՏ 2006.03.09/12(467),
23. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի <<Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին>> № 259 որոշում,ՀՀՊՏ 1999.05.06/11(77),
24. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի <<Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի,

հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին>> №218-Ն որոշում, ՀՀՊՏ 2003.04.02/17(252),

25. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիայի և հայտի ձևերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի №327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> №90-Ն որոշում, ՀՀՊՏ 2015.02.18/8(1097).1,

26. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի <<Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի № 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> №1404-Ն որոշում,ՀՀՊՏ 2017.11.22/69(1344),

27. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի <<Հողն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկն ու հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի №1277-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> №124-Ն որոշում, ՀՀՊՏ 2018.02.21/13(1371),

28. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի <<Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին>> № 75-Ն որոշում, ՀՀՊՏ 2011.02.23/11(814),

29. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 23-ի <<Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին>> №397-Ն որոշում, ՀՀՊՏ 2006.04.19/23(478),

30. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի <<Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին>> №64-ն որոշում, ՀՀՊՏ 2005.02.16/13(385),

31. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2007 թվականի փետրվարի 2-ի <<Թափոնի անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին>> №19-Ն հրաման, ՀՀԳՏ 2007.03.01/7(247),
32. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին>> №342-Ն հրաման,ՀՀԳՏ 2006.11.15/27(236),
33. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2007 թվականի ապրիլի 27-ի <<Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաշվարկի օրինակելի ձևը հաստատելու մասին>> № 97-Ն հրաման,ՀՀԳՏ 2007.06.01/15(255),
34. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի <<Թափոններ գոյացնող, վերամշակող և օգտահանող օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և ռեեստրի վարման գրքի ձևերը հաստատելու մասին>> №359-Ն հրաման,ՀՀԳՏ 2006.12.04/29(238),
35. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 24-ի <<Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի և ռեեստրի վարման գրքի ձևերը հաստատելու մասին>> N 387-Ն հրաման,ՀՀԳՏ 2006.12.15/30(239),
36. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի <<Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկման մեթոդիկայի հաստատման մասին>> № 464-Ն հրաման,ՀՀԳՏ 2004.04.01/8(156),
37. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի <<Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին>> №01-Ն հրաման, ՀՀԳՏ 2010.03.01/5(357):